Համոզմունքների դերը հայ-ադրբեջանական դիմակայության մեջ. հայացք նախագահների խոսույթին

ԱՐԱՄ ԹԵՐԶՅԱՆ
Երևանի պետական համալսարան

Ստացված է 27.05.2015
Ընդունված է 27.05.2016

Մասնագիտական գրականության մեջ հայ-ադրբեջանական դիմակայությունը դիտարկվում է գերազանցապես տարածաշրջանային աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործոնների համատեքստում: Մինչդեռ ուշադրությունից գրեթե դուրս է մնացել գլխավոր քաղաքական դերակատարների առանցքային համոզմունքների և առճակատման քաղաքականության վրա ունեցած դրանց դերի սոցիալ-կառուցողական տեսանկյունը: Հոդվածում փորձ է արվում պարզաբանել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող համոզմունքները և բացահայտել դրանց գործնական կիրառությունները: Միտումնավոր շրջանցվում են հակամարտության տնականության վերաբերյալ հիմնական աշխարհաքաղաքական մեկնաբանությունները, և նշվում է, որ նախագահների համոզմունքները, իրավիճակային գործոններին զուգահեռ, դրդում են որդեգրել առճակատման տարբեր քաղաքականություններ: Համոզմունքների և վարքագծերի ընդգծված կապակցվածությունն ակնհայտ է դարձնում համոզմունքների փոփոխականը հակամարտությունների կարգավորմանն առնչվող մարտահրավերների և սահմանափակումների շրջանակում ներառելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր
Հայ-ադրբեջանական դիմակայություն, հայատյացություն, կենտրոնական և գործիքային համոզմունքներ, էքստրավերսիա, իրավիճակային գործոններ:

Համոզմունքներ. հասկացությունը և քաղաքական նշանակությունը

Սառը պատերազմի ավարտից հետո միջազգային հարաբերությունների ոլորտում համոզմունքների ուսումնասիրությունը՝ որպես պատճառական մեխանիզմներ, ձեռք բերեց կայուն արդիականություն: Իրականացված ուսումնասիրություններում համոզմունքները որպես «իրականության սուբյեկտիվ պատկերացումներ» դիտարկելու միտում կա, ինչը զգալի կարևորություն ունի հետսառըպատերազմյան

շրջանի համաշխարհային քաղաքականության մեջ՝ մի քանի ուղղություններով[1]:

Ակնհայտորեն, կոնստրուկտիվիստական տեսություններում անտեսվում էր համոզմունքների կարևորությունն արտաքին քաղաքականության իրականացման մեջ: Նեոռեալիստական, նեոլիբերալ և կոնստրուկտիվիստական մոտեցումները հիմնականում արձանագրում են, որ առաջնորդների համոզմունքները սոսկ արտացոլում են, սակայն ոչ՝ ձևավորում արտաքին և ներքին իրողությունները: Դրանից հետևում է, որ ռացիոնալ առաջնորդները և նրանց արտաքին քաղաքականության ռազմավարությունները ենթակա են միջազգային հարաբերությունների հիմքում ընկած գործոնների ազդեցությանն՝ անկախ այն բանից, դա վերաբերում է նեոռեալիզմին հատուկ ուժերի հավասարակշռությանը, թե նեոլիբերալիզմին բնորոշ բազմակողմ ինստիտուտներին: Այդուհանդերձ, միջազգային քաղաքական ասպարեզի հետսառըպատերազմյան վայրիվերումները և դրանց աճող բարդությունն առաջ բերեցին տեսական կառուցվածքային մոտեցումների և գերիշխող ռացիոնալիզմի մասին ենթադրությունների վերաիմաստավորում: Ակնհայտորեն, գլոբալիզացիայի ուժգնացումը և ասիմետրիկ վտանգների բազմապատկումը սահուն կերպով պատճառ դարձան, որ հետազոտողները դուրս գան ավանդական գործոնների շրջանակից և սկսեն ավելի մեծ ուշադրություն դարձնել համոզմունքներին՝ որպես պատճառական մեխանիզմներ: Որոշ գիտնականներ պնդում են, որ համոզմունքների՝ որպես պատճառական մեխանիզմների, կարևորությունն անխուսափելիորեն մեծանում է և դրանք ունեն լուրջ ազդեցություն ներկայիս բարդ և փոխկապակցված աշխարհում[2]:

Ըստ լայնորեն ընդունված սահմանման, «անհատի համոզմունքների համախումբը ներկայացնում է այն բոլոր կանխավարկածները և տեսությունները, որոնք նա համարում է ճշմարիտ տվյալ պահին»[3]: Ինչպես կյանքի բոլոր ոլորտներում, քաղաքականության մեջ ևս համոզմունքներն օգնում են որոշել այն իրավիճակի բնույթը, որին

---

[1] **Schafer M. and Walker G. S.** ed., Beliefs and Leadership in World Politics, Palgrave Macmilan 2006, p. 4.

[2] Նույն տեղում, էջ 7:

[3] **Houghton D. P.,** Political Psychology: Situations, Individuals, and Cases, Routledge 2009, p. 106.

բախվում ենք (ախտորոշում), ինչպես նաև դրանից դուրս գալու տարբերակներն ու լուծումները, որոնք համարում ենք համապատասխան (կանխատեսում): Կոգնիտիվ-հոգեբանական տեսանկյունից համոզմունքները կարող են դիտարկվել որպես անհատի աշխարհընկալման ձևավորման «ամենակարճ ճանապարհ»: Իրականացված ուսումնասիրություններում տարբերակվում են նորմատիվային համոզմունքներ (համոզմունքներ այն մասին, թե ինչ պետք է լինի) և պոզիտիվ համոզմունքներ (համոզմունքներ այն մասին, թե ինչ կա), կենտրոնական և ծայրամասային համոզմունքներ (համոզմունքներ, որոնք անփոփոխ են և, որոնք պակաս կարևոր են), բաց և փակ համոզմունքներ (համոզմունքներ, որոնք, որպես կանոն, ենթակա են կամ ենթակա չեն փոփոխության): Մեծ ուշադրության են արժանացել հատկապես փիլիսոփայական և գործիքային համոզմունքները, որոնք կենտրոնացած են իրականության համալիր ընկալման (փիլիսոփայական համոզմունքներ), ինչպես նաև մեթոդների ու գործիքների համախմբի վրա՝ ընկալվող իրականությանը բնորոշ խոչընդոտների շրջանակում ռազմավարական նպատակներին հասնելու համար (գործիքային համոզմունքներ)[4]:

Քաղաքական համոզմունքները լայորեն ուսումնասիրվել են «օպերացիոնալ կոդի» շրջանակներում: Առանձնացնելով փիլիսոփայական և գործիքային համոզմունքները որպես «օպերացիոնալ կոդի» հիմնասյուներ՝ Ալեքսանդր Ջորջը պնդում էր, որ այն ապահովում է հասարակական և քաղաքական կյանքի հիմնարար խնդիրների վերաբերյալ ընդհանուր համոզմունքների համախումբ[5]:

Խնդրի վերաբերյալ ուսումնասիրություններում նշվում է, որ քաղաքական դերակատարների անհատականությունը և նրանց համոզմունքներն առանձնահատուկ կարևոր են չորս պայմաններում. երբ քաղաքական դերակատարը զբաղեցնում է ռազմավարական դիրք, երբ իրավիճակն անորոշ է, անկայուն և բարդ, երբ իրավիճակն ունի խորհրդանշական և զգայական նշանակություն, երբ պահանջվում է ինքնաբուխ կամ առանձնակի բարդ վարքագիծ: Ավելին, անհատականությունը դառնում է հատկապես կարևոր, երբ իշխանությունը կենտ-

[4] Նույն տեղում, էջ 106-107:
[5] Նույն տեղում, էջ 108:

ռոնացված է, և անկայուն արտաքին պայմանները (մասնավորապես, արտաքին քաղաքականության ճգնաժամը՝ կապված «թշնամի» ազգերի հետ) ծառայում են որպես նախագահական իշխանության ամրապընդման դրդապատճառ[6]:

Վերոնշյալը լիարժեք համապատասխանում է Հայաստանին և Ադրբեջանին՝ թշնամի պետությունների, որոնց բնորոշ են իշխանության կենտրոնացումը և ուժեղ նախագահական իշխանությունը: Ավելին, երկու երկրներն էլ բախվում են սուր մարտահրավերների ու անկայունությունների Հարավային Կովկասի անհանգիստ տարածաշրջանում: Ակնհայտորեն, տարածաշրջանային անկայունությունը և սուր իրավիճակները թելադրում են հատուկ ջանքեր պահանջող վարքագիծ՝ այդպիսով հիմնական քաղաքականություն իրականացնողներին՝ նախագահներին, մղելով առաջին պլան:

Նրանց համոզմունքների վերլուծությունը կօգնի պարզաբանել Լեռնային Ղարաբաղի հակամարտության և հայ-ադրբեջանական լարված հարաբերությունների կարգավորման գործընթացները փակուղուց դուրս բերելու հնարավորության դժվարություններն ու հեռանկարները:

Հոդվածում վերլուծվում են նախագահներ Ալիևի և Սարգսյանի ելույթները, որոնցում զգալի անդրադարձ է կատարվում, համապատասխանաբար, Հայաստանին և Ադրբեջանին՝ մոտեցումների տարբերությունների ու ընդհանրությունների պատճառները բացահայտելու նպատակով:

Իլհամ Ալիևի կենտրոնական և գործիքային համոզմունքները Հայաստանի վերաբերյալ

Իլհամ Ալիևի ելույթներն ու հայտարարությունները ընդգծված արտահայտում են Հայաստանի նկատմամբ նրա թշնամական ու հեգնական պատկերացումները: Վերջինս աներկբա դրսևորվում է այնպիսի բացասական իմաստավորումներում, ինչպիսիք են

[6] **Winter G. D.,** Personality and Political Behavior, *Oxford Handbook of Political Psychology*, ed. by Sears O. D., Huddy L., Jervis R., Oxford University Press, 2003, 111-112.

«ֆաշիստական պետություն», «բարբարոս», «վանդալ» և «ագրեսոր» երկիր: «Հայաստանը ֆաշիստական պետություն է: Նրա ազգային գաղափարախոսությունը ֆաշիզմն է, խտրականությունը և ազգայնականությունը»[7]: Ավելին, Ալիևը պնդում է, որ «Հայաստանի մասին խոսելիս շատ բարդ է օգտագործել «անկախ պետություն» արտահայտությունը… Հայաստանը նույնիսկ գաղութ չէ, այն նույնիսկ արժանի չէ լինել ծառա»[8]: Հետաքրքրական է, որ պետություն-հասարակություն սահմանը հստակ ուրվագծված չէ և հաճախ նույնիսկ՝ խախտված: Հայաստանի իշխանությունների վերաբերյալ Ալիևի կոշտ քննադատությունը տարածվում է ընդհանուր առմամբ հայերի վրա, ինչը վառ արտահայտված է նրա հետևյալ հաստատագրման մեջ. «Ամբողջ աշխարհի հայերը Ադրբեջանի թիվ մեկ թշնամին են»[9]:

Ալիևի խոսույթի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում կարելի է վեր հանել շատ բարձր մակարդակի էքստրավերսիա, որն ուղեկցվում է անզիջում դիրքորոշումներով և հակամարտության «սառեցման» ողջ մեղքը Հայաստանի վրա բարդելու միտմամբ: Նա մշտապես պնդում է, որ հայկական իշխանություններն ուղղակիորեն պատասխանատու են հակամարտության կարգավորման հետաձգման հետևանքների համար: Ավելին, ըստ նրա տարածաշրջանային անվտանգությանը սպառնացող գլխավոր վտանգը գալիս է Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի վարած ագրեսիվ քաղաքականությունից[10]: Ալիևը շարունակաբար մեղադրում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանա-

---

[7] Ilham Aliyev: Azerbaijan will restore its territorial integrity and sovereignty. 19 March 2014 . Available from: http://en.apa.az/xeber azerbaijan_will_restore_its_territorial__208894.html (Accessed: 4 March 2016).

[8] Aliyev I., *Armenia is not even a colony, it is not even worthy of being a servant. @presidentaz.* [Twitter]. 29 January . 2015. Available from: https://twitter.com/presidentaz/status/560718307515318272 (Accessed: 8 April 2016).

[9] Ilham Aliyev, "naughty son" of the "national leader"?. 16 May 2012. Available from: http://www.panarmenian.net/eng/details/107602 [Accessed: 5 May 2016].

[10] Aliyev I., *The main threat to regional security is posed by the aggressive policy of Armenia against Azerbaijan. @presidentaz* [Twitter]. 1 October 2014. Available from: https://twitter.com/presidentaz/status/517274762351898625 (Accessed: 20 March 2016).

խազահներին փակուղուց դուրս գալու հարցում անգործության և անկարողության մեջ: Մինչդեռ, ըստ նրա, Ադրբեջանը չունի մեղքի իր բաժինը, «այն կայունացնող երկիր է, և տարածաշրջանում կայունությունն ապահովվում է միայն ադրբեջանական պետության վարած քաղաքականության շնորհիվ»[11]:

Հատկանշական է, որ Ալիևի վառ արտահայտված հակահայկական դիրքորոշումները վերաբերում են երկրի և դրա պատմության գրեթե բոլոր ասպեկտներին: Օրինակ, Հայոց Ցեղասպանությունը հիշատակվում է որպես «առասպել, որը պետք է Թուրքիան և Ադրբեջանը համակարգված քաղաքականությամբ ի չիք դարձնեն»[12]:

Ավելին, Ալիևը կասկածի տակ է առնում Հայաստանի պատմությունն ու ազգային ինքնությունը, պնդելով, որ «ոչ միայն Լեռնային Ղարաբաղն, այլև ներկայիս Հայաստանի զգալի մասը հնագույն ադրբեջանական հողեր են», և վստահություն հայտնելով, որ «ադրբեջանցիները կվերադառնան Լեռնային Ղարաբաղ, այլ օկուպացված տարածքներ և Ադրբեջանի բոլոր պատմական տարածքներ»[13]:

Ըստ էության, Ալիևի հակահայկական համոզմունքների և գործողությունների միջև կա խիստ համապատասխանություն, այլ կերպ ասած՝ համոզմունքները ձևավորում են վարքագիծը: Այդ առումով հատկանաշական է «Սաֆարովի գործը»: Ադրբեջանական բանակի լեյտենանտ Ռամիլ Սաֆարովին, ով կացնահարեց հայկական բանակի սպա Գուրգեն Մարգարյանին քնած ժամանակ, Ադրբեջանում դիմավորեցին որպես հերոս, և մարդասպանն արժանացավ

---

[11] *President Aliyev says Azerbaijan ready for any scenario*. 7 August 2014. Available from: http://www.azernews.az/azerbaijan/69476.html (Accessed: 11 May 2016).

[12] Aliyev I., *Turkey and Azerbaijan work in a coordinated manner to dispel the myth of the "Armenian genocide" in the world. @presidentaz* {Twitter]. 4 September 2014. Available from: https://twitter.com/presidentaz/status/507430784710361088 (Accessed: 12 April 2016).

[13] Ilham Aliyev wants Nagorno-Karabakh, to other occupied lands and “ historical Azerbaijani lands”. 20 March 2014. Available from: http://massispost.com/2014/03/ilham-aliyev-wants-nagorno-karabakh-and-historical-azerbaijani-lands-back/ (Accessed: 12 April 2016).

նախագահ Ալիևի հատուկ վերաբերմունքին: Նա կացնահարողին մաղթեց «հետագա հաջողություններ իր ռազմական կարիերայում»[*]:

Ակնհայտորեն, Ալիևի *գործիքային և փակ համոզմունքներն* անքակտելիորեն կապված են և բխում են Հայաստանի և հայերի մասին լայն փիլիսոփայական համոզմունքներից: Այդ տեսանկյունից անլուրջ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը բանակցային գործընթացի միջոցով իրականացնելու վերաբերյալ Ադրբեջանի ստանձնած պարտավորությունը: Զարմանալի չէ, որ «փոխզիջում» եզրույթը հիմնականում գոյություն չունի Ալիևի խոսույթում: Ալիևի հայտարարությունները հատվածաբար ուսումնասիրելիս միգուցե և կարելի է պնդել, որ նա երբեմն փոխզիջումային համաձայնության կոչ է անում: Այդուհանդերձ, «փոխզիջում» հայեցակարգի, ինչպես նաև միջազգային իրավունքի խորը ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փոխզիջումը չի նախատեսում հակամարտության կարգավորման երկու առանցքային սկզբունքների՝ տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի, վերաբերյալ համաձայնություն, քանի որ դրանք առնչվում են ՄԱԿ անդամ երկրների պարտավորություններին և սակարկելի չեն: Մինչդեռ Ալիևի բազմաթիվ հայտարարություններ՝ խնդրի կարգավորման վերաբերյալ, վկայում են, որ ՄԱԿ անդամ երկրի նախագահը չգիտի այդ կազմակերպությանն անդամակցելիս իր երկրի ստանձնած պարտավորությունների և ձեռք բերած լիարգորությունների շրջանակը: Մասնավորապես. «ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Լեռնային Ղարաբաղին երբեք չի շնորհվի անկախություն: Ադրբեջանը երբեք չի ընդունի, իսկ աշխարհը երբեք չի ճանաչի դա»[14]: Հավանաբար Ալիևը

---

[*] Սաֆարովին շնորհվեց մայորի կոչում: Պաշտպանության նախարարությունը Սաֆարովին պարգևատրեց նաև ութ տարվա աշխատավարձով և բնակարանով: *Released Azerbaijani officer Ramil Safarov given rank of major.* 1 September 2012. Available from: http://en.trend.az/azerbaijan/society/2060861.html (Accessed: 14 April 2016).

[14] Aliyev I., *The Armenian-Azerbaijani Nagorno-Karabakh conflict will be resolved within the territorial integrity of Azerbaijan. Nagorno-Karabakh will never be granted independence. Azerbaijan will never accept and the world will never recognize it. @presidentaz* {Twitter]. 30 May 2015. Available from: http://www.twitlonger.com/show/n_1smelca (Accessed: 24 February 2016).

չգիտի, որ միջազգային իրավունքի շրջանակներում մետրոպոլիան չի կարող թելադրել ինքնորոշման ժամանակ ընտրվող քաղաքական կարգավիճակը, դա միայն ինքնորոշվող ժողովրդի իրավունքն է, որ ինքնորոշվող ժողովրդի անկախությունը ոչ թե շնորհում է մետրոպոլիան, այլ ճանաչում են ՄԱԿ-ի անդամ երկրները, որ աշխարհը երբեք Ալիևին չի շնորհել իր անունից խոսելու իրավունք: Պատահական չէ, որ Ալիևի խոսույթում գերիշխող է ռազմական ճանապարհով հակամարտության լուծման վերաբերյալ ուժեղ հավատը. «ռազմական բյուջեն և մարտական կարողությունները գլխավոր դեր կխաղան ... ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում»[15]: Ալիևը ռազմական ուժի մեծացումը համարում է առանցքային Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում. «Մենք շարունակելու ենք ընդլայնել մեր ռազմական կարողությունները: Վերջին տարիներին ձեռք բերած զենք-զինամթերքը վկայում է այն մասին, որ մենք կարող ենք լուծել ցանկացած խնդիր»[16]: Բացի այդ, նա պնդում է, որ «եթե հայկական ֆաշիստական պետությունը չդադարեցնի իր կեղտոտ գործողությունները, հայկական պետության գոյությունն ինքնին կդրվի կասկածի տակ»[17]:

Հարց է առաջանում՝ քաղաքական հոգեբանն ինչպե՞ս կգնահատի Ալիևի ռազմատենչ հռետորաբանությունը: Որոշ հետազոտողներ նրա ծայրահեղ դիրքորոշումները վերագրում են «ցածր ինտեգրատիվ լիարժեքությանը»: Ինտեգրատիվ լիարժեքությունը անհատականության առավել շատ ուսումնասիրված կառուցվածքային կամ ոճական առանձնահատկություններից է: Արդյո՞ք առաջնորդները տեղեկատվությունը մշակում են պարզունակ ձևերով՝ կենտրոնանալով միայն մեկ հեռանկարի կամ սև ու սպիտակ այլընտրանքների վրա, թե՞ հաշվի են առնում տարբեր տեսակետներ՝ մինչև անգամ դրանք տեղավորելով ավելի լայն, համալիր հեռանկարների շրջանակում:

---

[15] Azerbaijan's President Threatens War with Armenia via Twitter. Avaliable from: https://www.theguardian.com/world/2014/aug/07/azerbaijan-president-threatens-war-armenia-twitter (Accessed: 28 April 2016).

[16] *President Aliyev says Azerbaijan ready for any scenario*. 7 August 2014. Available from: http://www.azernews.az/azerbaijan/69476.html .

[17] *Azerbaijani President: "The enemy has received an adequate response"*. 7 August 2014. Available from: http://en.apa.az/print/214863 (Accessed: 20 April 2016).

Այդ խնդրին նվիրված ուսումնասիրությունները վկայում են, որ սև ու սպիտակ տեսակետներ և ծայրահեղ դիրքորոշումներ ունեցող առաջնորդները բնորոշվում են ցածր ինտեգրատիվ լիարժեքությամբ: Հերմանն ուսումնասիրել է ինտեգրատիվ լիարժեքության և ռազմատենչության հարբերակցությունը՝ նշելով, որ «ագրեսիվ առաջնորդներն ունեն իշխանության ավելի մեծ պահանջ, ցածր հայեցակարգային լիարժեքություն, կասկածամիտ են, ազգայանական և հակված են հավատալու, որ ունեն որոշ վերահսկողություն այն իրողությունների վրա, որոնցում ներգրավված են»[18]:

Այդուհանդերձ, պետք է նաև չանտեսել իրավիճակային գործոնները, որոնք կարող են որոշել համոզմունքների և հռետորաբանության բնույթը: Այլ կերպ ասած, համոզմունքների վրա հիմնված թվացյալ խոսույթի վրա ավելի շուտ կարող են ազդել սոցիալական խիստ գործոնները, քան ճանաչողական կողմնորոշումները:

Մի խումբ ուսումնասիրություններում Ալիևի ռազմատենչ հռետորաբանությունը և հայատյաց դիրքորոշումը վերագրվում են այն հիմնական փիլիսոփայությանը, որը բնորոշ է ավտորիտար վարչակագերին: Վերջիններս մշտապես «փնտրում են արտաքին թշնամիներ» ներպետական խնդիրներից ուշադրությունը շեղելու համար դեպի արտաքին համազգային սպառնալիքներ: Ավելին, արտաքին թշնամու դիմակայելու ահրաժեշտությունն օգտագործվում է որպես երկրում բազմակարծությունը և այլակարծությունը ճնշելու կատարյալ դրդապատճառ: Գործողությունների ընթացքը պարզ է. ցանկացած ընդդիմադիր քաղաքական գործչի իշխանությունների կարող են հեշտությամբ պիտակավորել որպես «լրտես», «դավաճան», ով ծառայում է թշնամու շահերին և խախտում է կայունությունը: Դա հանգեցնում է իշխանության մենաշնորհի հայրենասեր և խարիզմատիկ նախագահի առաջնորդած ավտորիտար ռեժիմներում: Զարմանալի չէ, որ 2009թ. Ադրբեջանում անցկացված հանրաքվեի արդյունքում վերացվեցին նախագահի պաշտոնավարման ժամկետային սահմանափակումները: Քաղաքացիական հասարակության դեմ ուղղված զանգվածային ճնշումները ևս հարկ է դիտարկել այդ համատեքստում:

---

[18] **Houghton D. P.,** Political Psychology: Situations, Individuals, and Cases, Routledge 2009, p. 103.

Միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերն ու մի շարք կազմակերպությունների ու ծրագրերի (Freedom House, Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագիր) հրապարակած զեկույցները մարդու իրավունքների խախտումների, քաղաքական և քաղաքացիական ազատությունների ճնշման վերաբերյալ, թվում է, տևական ժամանակ չեն մեղմում համատարած ավտորիտար միտումները: Freedom House-ի 2014թ. «Ազատությունն աշխարհում» զեկույցում Ադրբեջանը դասակարգվում է որպես «ոչ ազատ»[19]: 2013թ. Freedom House-ը նկարագրել է Ադրբեջանում ազատության ոլորտի հետընթաց միտումներ և նշել, որ երկիրը փակված է «վայրընթաց պարույրում», որը մոտ ապագայի համար չի ներկայացնում ազատությունների զարգացման որևէ հնարավորություն: Ավելին, Freedom House-ը քննադատել է նաև ժողովրդավարական կառավարությունների գործունեությունը, ընդգծելով, որ դրանք խուսափում են դատապարտել այդ երկրում ավտորիտարիզմի շարունակական խորացումը, քանի որ Ադրբեջանը նավթի և բնական գազի հարուստ պաշարներ ունի[20]:

Համատարած ճնշումների վառ դրսևորումներից էր քաղաքացիական ակտիվիստ, Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտի հիմնադիր և տնօրեն Լեյլա Յունուսի[21] կալանավորումը և 8.5 տարվա ազատազրկումը: Վերջինս քարոզում էր և ջանում հող նախապատրաստել հայերի և ադրբեջանցիների միջև երկխոսության համար: Կարելի է եզրակացնել, որ ցանկացած ակտիվիստ, ով հրապարակավ քննադատում է ավտորիտար միտումները և մարդու իրավունքների խախտումները երկրում, ինչպես նաև ընդդիմանում իշխանություններին, կարող է ստանալ ազգային դավաճանի պիտակ կամ հայտնվել բանտում՝ մի շարք մեղադրանքների առաջադրմամբ:

---

[19] Freedom House 2014, *Freedom in the World. The Democratic Leadership Gap* (Washington, D.C.: Freedom House), p. 18. Available from: https://freedomhouse.org/sites/default/files/FIW2014%20Booklet.pdf (Accessed: 18 February 2016).

[20] Նույն տեղում, էջ 7:

[21] Լեյլա Յունուսը մեղադրվում էր խարդախության, հարկերից խուսափելու, փաստաթղթեր կեղծելու և ապօրինի ձեռնարկատիրության մեջ: Avaliable from: https://www.frontlinedefenders.org/en/case/case-history-leyla-yunus (Accessed: 17 May 2016).

Ալիևի հայատյաց դիրքորոշումը պայմանավորող մեկ այլ իրավիճակային գործոն է նավթով հարուստ Ադրբեջանի տնտեսական կառուցվածքը: Նման երկրները, որպես կանոն, տառապում են «նավթային անեծքով» և «հոլանդական հիվանդությամբ»[22], որոնք նավթի պաշարներից երկրի գերկախվածության արդյունք են:

Քաջատեղյակ Լեյլա Ալիևան դիպուկ նշում է, որ նավթի միջազգային գների բարձրացումը յուրաքանչյուր բարելի համար 11 դոլլարից (1998թ.) մինչև 140 դոլլար (2008թ.), ինչի արդյունքում Ադրբեջանի տնտեսության մեջ արմատավորեց նավթի անփոխարինելի դերը, բացասաբար է ազդում երկրում ժողովրդավարության խթանման վրա[23]: Ակնհայտորեն, երկրի նավթային պաշարների նկատմամբ պետության մենաշնորհային իրավունքն ընդլայնել է իշխանությունների վերահսկողությունը բնակչության վրա՝ զգալիորեն թուլացնելով քաղաքացիական հասարակության՝ ոչ ժողովրդավարական քաղաքականությանն ու լայնամասշտաբ չարաշահումներին, հակազդելու կարողությունը:

Փաստերը վկայում են, որ երկրի 2013թ. պետական բյուջեի եկամուտների 58 տոկոսը ստացվել է Ադրբեջանի Հանրապետության Պետական նավթային հիմնադրամից: Նույնիսկ տնտեսության այնպիսի ոչ նավթային առաջատար ոլորտներ, ինչպիսիք են շինարարությունն ու տրանսպորտը, անուղղակիորեն հովանավորվում են նավթային հատվածի կողմից[24]:

Հատկանշական է, որ վերոնշյալ գործոններին զուգահեռ նավթից կախվածություն ունեցող Ադրբեջանը խիստ զգայուն է միջազգային շուկայում նավթի գների տատանումների նկատմամբ: Ակնհայտ է, որ վերջին շրջանում միջազգային շուկայում նավթի գների անկումից

---

[22] **Bature B. N.,** The Dutch Disease and the Diversification of an Economy: Some Case Studies, *IOSR Journal Of Humanities And Social Science (IOSR-JHSS)* **15,** 5, Sep. - Oct. 2013, 6-14.

[23] **Alieva L.,** Azerbaijan:Power in the Petro-State, *Plight of Democracy's Plight in the European Neighborhood: Struggling Transitions and Proliferaing Dynasties*, ed. by Emerson M. and Youngs R., Centre for European Policy Studies, Brussels, 2008, p. 115.

[24] Economic Development in Azerbaijan: Country Partnership Strategy: Azerbaijan, 2014–2018. Avaliable from: http://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-aze-2014-2018-sd-02.pdf (Accessed: 15 May 2016).

հետո (1 բարելի համար 30 դոլլարից ցածր) երկիրը հայտնվել է լիակատար անկարգության մեջ:

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո կատարված մի ուսումնասիրություն փաստում է արտարժույթի անկման և ինֆլյացիայի պատճառով առաջ եկած լուրջ բարդությունները, որոնք հանգեցրեցին իշխանությունների նկատմամբ դժգոհությունների և ամբողջ երկրի տարածքով լայնածավալ բողոքի ակցիաների: Հեղինակը եզրակացնում է, որ երկրում պահպանվող անկայունությունը կարող է դրդել իշխանություններին կրկին օգտագործել Ղարաբաղի խաղաթուղթը՝ լայնամասշտաբ կամ փոքրամասշտաբ ռազմական գործողությամբ՝ որպես տնտեսական դժվարությունները մեղմելու և բոլոր ադրբեջանցիներին պետական դրոշի շուրջ համախմբելու միջոց[25]:

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ քաղաքական և տնտեսական ներպետական խնդիրները զգալիորեն ազդում են Իլհամ Ալիևի հայատյաց հռետորաբանության վրա: Կարելի է պնդել, որ իրավիճակային գործոնները, առավել քան համոզմունքների համակարգը կամ կոգնիտիվ լիարժեքությունը, պայմանավորում են ծայրահեղ դիրքորոշումներով ուղեկցվող խիստ հակահայկական խոսույթը:

Սերժ Սարգսյանի տեսակետն «ուրիշի» վերաբերյալ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի խոսույթի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն իր ադրբեջանցի գործընկերոջ, նա հստակ տարբերակում է դնում ադրբեջանական պետության, վերնախավի և հասարակության միջև: «Ես Ադրբեջանի ժողովրդին չեմ համարում հայ ժողովրդի թշնամի: Մենք ի վիճակի ենք արժանապատվորեն լուծելու մեր հակասությունները և, որպես հարևաններ, խաղաղ համագոյակցել»[26]:

---

[25] **De Waal T**., Azerbaijan's Perfect Storm, *Carnegie Europe*. January 19, 2016. Avaliable from: http://carnegieeurope.eu/strategiceurope/?fa=62501 (Accessed: 18 May 2016).

[26] Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում, Available at: http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/10/02/President-

Նա Ադրբեջանի քաղաքական իշխանություններին բնորոշում է որպես հայատյաց, ագրեսիվ, ռազմատենչ, ապակառուցողական, անհանդուրժող. «Պարտադրանք, բռնություն, ահաբեկչություն, պատերազմ. սրանք են իրականության մասին մեր հակառակորդի պատկերացումները»[27]: Տխրահռչակ «Սաֆարովի գործը» զգալի արձագանք ստացավ Սարգսյանի կողմից և կոշտացրեց նրա դիրքորոշումն Ադրբեջանի նկատմամբ: Սարգսյանն արտահայտեց իր խորը ցասումը, նշելով, որ «այն բացահայտ ցինիզմը և միջազգային իրավունքի նորմերի ոտնահարումը, որոնցով ուղեկցվում է մարդասպանի հերոսացումն Ադրբեջանի կողմից, ապշեցուցիչ է»[28]:

Սարգսյանը բազմիցս կասկածի տակ է առել Ադրբեջանի եվրոպական ինքնությունն ու հավատարմությունը եվրոպական արժեքներին, նշելով, որ Ադրբեջանը խիստ թյուր պատկերացում ունի եվրոպական արժեքների էության վերաբերյալ և Եվրոպան դիտում է որպես «հարմար շուկա նավթ ու գազ վաճառելու համար». «Զավեշտալի է, երբ եվրոպական ուղին որդեգրած մեր հարևանը սպառնում է հարվածել հայկական քաղաքացիական օդանավերին, իրականացնում է ամենօրյա ռազմատենչ քարոզչություն և սպառնում ղարաբաղյան հարցը լուծել պատերազմով»[29]:

Ավելին, նախագահը կասկածի տակ է առնում «Ադրբեջանի բռնապետական ռեժիմի» կապը մարդկային նորմերի ու քաղաքա-

---

Serzh-Sargsyan-participated-at-the-session-of-the-PACE-speech/ (Accessed 10 Sep. 2015).

[27] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը երդմնակալության արարողության ժամանակ, Available at: http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/04/09/Statement-by-Serzh-Sargsyan-at-the-Ceremony-of-Inauguration/ (Accessed 10 Apr. 2015).

[28] Նախագահ Սերժ Սարգսյանի և ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի համատեղ ճեպազրույցը, Available at: http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2012/09/06/President-Serzh-Sargsyan-Anders-Fogh-Rasmussen-NATO-press-conference/ (Accessed 7 Mar. 2015).

[29] Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Սլովենիայի Հանրապետություն, http://www.president.am/en/press-release/item/2011/04/13/news-1530/ (Accessed 17 Apr. 2015).

կըրթվածության հետ[30], պնդելով, որ հսկայական անդունդ կա ադրբեջանական իշխանությունների պատկերացումների և քաղաքակիրթ աշխարհում ընդունված նորմերի միջև[31]:

Զարմանալի չէ, որ Ս. Սարգսյանը սահմանազատում է «եվրոպական»» Հայաստանը «ոչ եվրոպական» Ադրբեջանից՝ անուղղակիորեն նշելով, որ դրանք գրեթե չունեն հատման ընդհանուր կետ. «Արևելյան գործընկերությունը դեռևս իր ձևավորման փուլում որոշակի խնդիրներ ուներ… Ինձ համար մինչև հիմա հասկանալի չէ Ադրբեջանին և Հայաստանին մեկ գործընկերության մեջ միավորելու սկզբունքը. տարբեր հնարավորություններ, տարբեր մոտեցումներ, տարբեր նպատակներ, և սա է պատճառը, որ այդ բաղադրիչը չաշխատեց»[32]:

Ի պատասխան իր ադրբեջանցի գործընկերոջը, Սարգսյանը մեղադրում է մյուս՝ ադրբեջանական, կողմին Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված փակուղուց դուրս գալու քաղաքական կամքի բացակայության համար. «Մենք առաջարկել ենք մեր հարևաններին արժանապատիվ խաղաղություն՝ խարսխված համամարդկային արժեքների վրա: Սակայն վերջին տարիների փորձը ցույց է տվել, որ նրանք պատրաստ չեն ընդունել առաջարկը»[33]: Ըստ նրա, Ադրբեջանի վարած ագրեսիվ քաղաքականությունը պատճառ է դարձել ոչ միայն խնդրի կարգավորման բանակցային գործընթացում որևէ էական

---

[30] Նախագահի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի նստաշրջանում, http://www.president.am/hy/press-release/item/2015/09/29/President-Serzh-Sargsyan-speech-UN-General-Assembly/ (Accessed 10 Oct. 2015).

[31] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ փորձագիտական հանրության ներկայացուցիչների առջև Քարնեգի հիմնադրամում, Available at: http://www.president.am/hy/statements-and-messages/item/2015/10/01/President-Serzh-Sargsyan-speech-at-Carnegie/ (Accessed 28 Mar. 2016).

[32] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Արևելյան գործընկերության հինգերորդ տարեդարձի առթիվ բարձր մակարդակի հանդիպմանը, Available at: http://www.president.am/en/statements-and-messages/item/2014/04/25/President-Serzh-Sargsyan-speech-Eastern-Partnership-Prague/ (Accessed 14 Jan. 2016).

[33] Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՀՀ Պաշտպանության նախարարությունում տեղի ունեցած ընդլայնված նիստում, Available at: http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/01/15/President-Serzh-Sargsyan-speech-session-Ministry-of-Defense/ (Accessed 20 May 2015).

առաջընթացի բացակայությանը, այլև արձանագրվել է լարվածության աճի միտում[34], որն, ի վերջո, հանգեցրեց քառօրյա պատերազմին: Սարգսյանի դիրքորոշումն Ադրբեջանի նկատմամբ զգալիորեն կոշտացավ 2015թ. սեպտեմբերից հետո՝ շփման գծում խոշոր տրամաչափի հրետանու կիրառման արդյունքում[35]: Շփման գծում աճող լարվածությունը Սարգսյանը վերագրեց «բռնապետական ռեժիմի ագրեսիվ քաղաքականությանը», որն «անդառնալիորեն կորցրել է ոչ միայն իրականության զգացումը, այլև մարդկային բոլոր հատկանիշները»[36]: «Ցավոք, հսկայական անդունդ կա ադրբեջանական իշխանությունների պատկե-ռացումների և քաղաքակիրթ աշխարհում ընդունված նորմերի միջև: Եթե քաղաքակիրթ աշխարհում ժողովրդի ինքնորշման իրավունքի իրացման համար ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ, ապա Ադրբեջանը, իր նավթային եկամուտներից կուրացած, ամեն կերպ սեփական պատկերացումները փորձում է պարտադրել ոչ միայն Լեռնային Ղարաբաղին և Հայաստանին, այլև միջնորդ երկրներին…»[37]:

Սարգսյանը անսասանորեն կողմնակից է հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ նշելով փոխզիջումների անհրաժեշտությունը: Վերջինս չի տարածվում միայն ինքնորոշման իրավունքի հիման վրա ԼՂ-ի անկախ կարգավիճակի որոշման վրա, որը ենթակա չէ բանավեճերի և փոխզիջման՝ որպես միջազգային իրավունքի նորմ: Հետաքրքրական է, որ մինչ Ալիևը պնդում է, որ «Ադրբեջանը երբեք չի

---

[34] Նախագահի ելույթը ՄԱԿ-ի...

[35] Ըստ ՀՀ Պաշտպանության նախարարության, ադրբեջանական բանակը Հայաստանի սահմանակից շրջանների ուղղությամբ կիրառել է ռուսական արտադրության Դ-30 հաուբից հրանոթ: Ի պատասխան ՀՀ ՊՆ հանդես է եկել հայտարարությամբ, որում նշվում է. «Հակառակորդին լռեցնելու, նրա գործողությունները կանխարգելելու և դրանով իսկ բանակցային գործընթացին աջակցելու նպատակով ՀՀ զինված ուժերն այսուհետ օգտագործելու են հրետանային և հրթիռային խոցման համարժեք միջոցներ՝ մշտական խոցման տակ պահելով ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումների տեղակայման վայրերը, բոլոր զորաշարժերը, զինտեխնիկան և կենդանի ուժը»: Armenia Will Use Heavy Artillery, Says Defense Ministry, September 26, 2015. Available from http://asbarez.com/140195/armenia-will-use-heavy-artillery-says-defense-ministry/> (Accessed 10 October 2015).

[36] Նախագահի ելույթը ՄԱԿ-ի...

[37] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ...

ճանաչի Լեռնային Ղարաբաղը», Սարգսյանը դիտարկում է ԼՂ-ի անկախության ճանաչումը որպես անսակարկելի և անվիճելի հարց: Ինչ վերաբերում է հակամարտության լուծման առնչությամբ Սարգսյանի փակ և գործիքային համոզմունքներին, վերջինս բազմիցս ընդգծել է, որ Հայաստանը հավատարիմ է հակամարտության խաղաղ կարգավորմանը, չնայած ունի Ադրբեջանի ռազմական ագրեսիային դիմակայելու և հակահարված տալու ներուժ: Ավելին, ի պատասխան ԵԽԽՎ-ում Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Սամադ Սեյիդովի հայտարարությանը՝ «Հայաստանի կողմից օկուպացված ադրբեջանական տարածքների 20 տոկոսի» վերաբերյալ, նախագահը առանձնահատուկ նշել է, «Եթե Ադրբեջանը ռազմական գործողություններ սկսի, ապա Հայաստանն իր ողջ կարողություններով, կպաշտպանի Լեռնային Ղարաբաղին: Եթե այդպիսի գործողություններ տեղի ունենան, ապա մի քանի ամիս հետո Դուք կդժգոհեք ձեր երկրի 25-30 տոկոսի բռնազավթումից»[38]: Այս հաստատագրումը փաստում է Հայաստանի ռազմական կարողությունների և Ադրբեջանի դեմ դուրս գալու ներուժի վերաբերյալ մեծ վստահության մասին:

Ինչ վերաբերում է Սարգսյանի համոզմունքները ձևավորող իրավիճակային գործոններին, ապա հարկ է ընդգծել, որ Հայաստանը ենթարկվում է կրկնակի շրջափակման Ադրբեջանի և Թուրքիայի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատճառով: Շրջափակումը զգալիորեն խոչընդոտում է կայուն տնտեսական զարգացմանը, որն էլ ավելի է խորանում Ադրբեջանի հետ սպառազինությունների մրցավազքի պատճառով՝ տնտեսության վրա դրված ծանր բեռի արդյունքում: Հայ-ադրբեջանական շփման գծում աճող լարվածությունն անխուսափելիորեն հանգեցնում է մեծ թվով զոհերի: Դա է պատճառը, որ Սարգսյանը մեղադրում է Ադրբեջանին վերջինիս ռազմատենչ, ագրեսիվ քաղաքականության համար, որն անտեսում է

[38] Սերժ Սարգսյանը՝ ԵԽԽՎ-ում Ադրբեջանի պատվիրակության ղեկավարին «Ինչո՞ւ Հայաստանը պետք է հաշվետու լինի Ադրբեջանին», Available at: http://araratnews.am/serzh-sargsyan-to-head-of-pace-azerbaijans-delegation-why-should-armenia-be-accountable-to azerbaijan/?lang=en#sthash.ApzPBUtJ.rzZat013.dpuf (Accessed 11 March 2016).

հակամարտության խաղաղ կարգավորմանը հավատարիմ լինելու իր պարտավորությունը:

Տխրահռչակ «Սաֆարովի գործը» զգալի արձագանք ստացավ Սարգսյանի կողմից՝ ակնհայտորեն կոշտացնելով նրա դիրքորոշումն Ադրբեջանի նկատմամբ:

Այդուհանդերձ, ի տարբերություն Ալիևի, ով ձգտում է օգտագործել ցանկացած առիթ «ֆաշիստական» հայկական պետության և «Ադրբեջանի թիվ մեկ թշնամի հայերի» նկատմամբ իր դիրքորոշումն արտահայտելու համար, Սարգսյանի պատասխանը բխում է իր ադրբեջանցի գործընկերոջ զավթողական հայտարարություններին արձագանքելու անհրաժեշտությունից: Նա խիստ սահմանազատում է դնում ադրբեջանական պետության և հասարակության միջև՝ իր քննադատությունն ուղղելով «բռնապետական ղեկավարությանն» ու վերջինիս «ագրեսիվ» քաղաքականությանը:

Աղյուսակ 1. Հայաստանի և Ադրբեջանի մասին պատկերացումները Ալիևի և Սարգսյանի խոսույթներում

Ալիևի պատկերացումը Հայաստանի մասին	«Ադրբեջանական պատմական հողերի վրա տեղակայված ֆաշիստական պետություն», «բարբարոս», «վանդալ» և «ագրեսոր», «գաղութ, որը նույնիսկ արժանի չէ լինել ծառա», «Ադրբեջանի թիվ մեկ թշնամի»
Սարգսյանի պատկերացումն Ադրբեջանի (վերնախավի) մասին	Հայատյաց, ռազմատենչ, ագրեսիվ, բռնապետական, ապակառուցողական (հակամարտության կարգավորման բանակցային սկզբունքը խախտող), ոչ եվրոպական (եվրոպական ինտեգրման էությունը թյուրըմբռնող)

Եզրակացություն

Արբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հակահայկական համոզմունքները զգալիորեն ազդում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ նրա որդեգրած առճակատման դիրքորոշումների վրա: Ալիևի խոսույթում Հայաստանը մշտապես

ասոցացվում է այնպիսի բացասական իմաստավորումների հետ, ինչպիսիք են «ֆաշիստական պետություն», «բարբարոս», «վանդալ» և «ագրեսոր»: Ավելին, պետության-հասարակություն սահմանը հաճախ խախտված է, այլ կերպ ասած, Հայաստանի նկատմամբ բացասական վերաբերմունքը տարածվում է ամբողջ աշխարհի հայերի վրա, ովքեր դիտարկվում են որպես «Ադրբեջանի թիվ մեկ թշնամի»:

Ալիևի խոսույթի ուսումնասիրությունը բացահայտում է նրա ընդգծված էքստրավերսիան, որին բնորոշ են փակ համոզմունքները՝ ոչ փոխզիջումային դիրքորոշումներ և հակամարտության «սառեցման» մեղքը Հայաստանի վրա բարդելու միտում: Նրա գործիքային համոզմունքներում առկա է Ադրբեջանի ռազմական կարողությունների և հակամարտության ուժային կարգավորման վերաբերյալ ուժեղ հավատ: Ըստ էության, Ալիևի հակահայկական համոզմունքների և գործողությունների միջև կա խիստ համապատասխանություն, այլ կերպ ասած՝ համոզմունքները ձևավորում են վարքագիծը:

Փաստերը վկայում են, որ Ալիևի ռազմատենչ հռետորաբանությունը և հայատյաց դիրքորոշումը բնորոշ են այն հիմնական փիլիսոփայությանը, որն ընկած է ավտորիտար ռեժիմների հիմքում: Վերջիններս մշտապես «փնտրում են արտաքին թշնամիներ» ներպետական խնդիրներից ուշադրությունը շեղելու համար դեպի համազգային արտաքին սպառնալիքներ: Ավելին, արտաքին թշնամուն դիմակայելու ահրաժեշտությունն օգտագործվում է որպես երկրում բազմակարծությունը և այլակարծությունը ճնշելու կատարյալ դրդապատճառ: Ուստի, իրավիճակային գործոններն, առավել, քան համոզմունքների համակարգը կամ կոգնիտիվ լիարժեքությունը, պայմանավորում են ծայրահեղ դիրքորոշումներով ուղեկցվող խիստ հակահայկական խոսույթը:

Ի տարբերություն իր ադրբեջանցի գործընկերոջը, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հստակ տարբերակում է դնում ադրբեջանական պետության, վերնախավի և հասարակության միջև՝ պնդելով, որ վերջինս Ալիևի բռնապետական վարչակազմի որդեգրած ռազմատենչ քաղաքականության պատանդն է: Ինչ վերաբերում է հակամարտության կարգավորման առնչությամբ Սարգսյանի փակ և գործիքային համոզմունքներին, վերջինս բազմիցս ընդգծել է, որ Հայաստանը

հավատարիմ է հակամարտության խաղաղ կարգավորման գաղափարին, չնայած այն հանգամանքին, որ ունի Ադրբեջանի ռազմական գործողու-թյուններին դիմակայելու և հակահարված տալու ներուժ:

Սարգսյանի դիրքորոշումն Ադրբեջանի նկատմամբ զգալիորեն կոշտացել է 2015թ. սեպտեմբերից հետո՝ խոշոր տրամաչափի հրետանու կիրառման արդյունքում, և, հատկապես, 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմից հետո: Կարելի է պնդել, որ Սարգսյանի համոզմունքների համաձայն Ադրբեջանը հայատյաց, ագրեսիվ, ռազմատենչ, թշնամական, ապակառուցողական, անհանդուրժող և բռնապետական երկիր է: Միաժամանակ, Սարգսյանի դիրքորոշումներն առաջ են եկել իր ադրբեջանցի գործընկերոջ ռազմատենչ հռետորաբանությանն արձագանքելու անհրաժեշտությունից:

The Role of Beliefs in Armenia-Azerbaijan Confrontaion: A Glance into Presidents' Discourse

ARAM TERZYAN
Yerevan State University

The long-standing logjam over Armenia-Azerbaijan troubled relations has prompted a focus on a wide array of regional-level (geo) political and (geo) economic constraints. Whereas little to no attention has been devoted to social constructivist perspective of key policy-makers' core beliefs and their role in perpetually confrontational behaviors. This article seeks to elucidate conflict-related beliefs of Azerbaijan's and Armenia's Presidents, and account for their practical applications. The article deliberately departs from the mainstream geopolitical explanations of Nagorno-Karabakh conflict perpetuation and argues that Presidents' beliefs (particularly those of Azerbaijan's President Ilham Aliyev) alongside their situational constraints induce to adopt confrontational policies. The marked consistency between beliefs and behaviors vividly demonstrates the imperative for incorporating the variable of beliefs into broader analysis of conflict settlement-related challenges and red-lines.